

ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏԱՐԿՈՒՄ ՎԱՃԱՌԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻ
ՀԵՂԻՆԱԿ ԿՈՍՏԱՆԴ ՋՈՒՂԱՅԵՑՈՒ ՄԱՍԻՆ՝

Բանալի բառեր – Կոստանդ Ջուղայեցի, Ջաքարիա Ագուլեցի, Նոր Ջուղա, Վենետիկ, Իզմիր, վաճառականական ձեռնարկ, կոմենդա պայմանագիր

1662 թ. հուլիսի 14-ին Նոր Ջուղայից սերող երկու հայ վաճառականներ՝ Ռամազի որդի Կոստանդն ու Պտոմի որդի Սիմեոնը, կնքում են կոմենդա պայմանագիր և իրենց կապիտալը դնում համատեղ շրջանառության մեջ¹։ Ըստ այդ առևտրական համաձայնագրի՝ Սիմեոնը Կոստանդի տրամադրության տակ էր դնում 1400 մառչիլ՝ ակնկալելով ստանալ այդ գումարի կեսից ստացվելիք շահույթը։ Առևտրական տերմինաբանությամբ «ընկեր» համարվող ու կոմենդա գործակալի պարտավորություն ստանձնող Կոստանդը, որի ներդրած մասնաբաժինն ընդհանուր դրամագլխում ընդամենը 160 մառչիլ էր, այդուհետ շրջագայելու էր առևտրական զանազան շուկաներում՝ պայմանագրով նախատեսված կապիտալը մեծացնելու և այդպիսով հարստանալու հույսով։ Վաղ արդի աշխարհի ցամաքային և ծովային ուղիները հատած ու վաճառաշահ կենտրոնները ներթափանցած հազարավոր հայ առևտրական գործակատարներից Կոստանդը չէր առանձնանա ոչնչով, եթե հետագայում չընտրեր առևտրական դպրապետի ուղին և տասնամյակներ անց չհեղինակեր մեր օրերը հասած վաճառականական ձեռնարկներ։

Վաղ արդի դարաշրջանում Սեֆյան Իրանի մայրաքաղաք Սպահանի հայկական արվարձան Նոր Ջուղան վերածվել էր հայ վաճառականության համաշխարհային ցանցի կենտրոնի, ցանց, որը ձգվում էր Հարավարևելյան

¹ Հեղինակն իր խորին երախտագիտությունն է հայտնում Լոս Անջելեսի Գալիֆոռնիայի համալսարանի պրոֆեսոր Սեպուհ Ասլանյանին՝ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկների՝ Նոր Ջուղայում ու Օքսֆորդում պահվող ընդօրինակությունները, ինչպես նաև՝ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանի երկու արժեքավոր փաստաթղթեր մատչելի դարձնելու համար։ Նա երախտապարտ է նաև Վենետիկի Կա' Ֆոսկարի համալսարանի պրոֆեսոր Մարիո Բնֆելիսեին՝ Վենետիկի պետական արխիվում իր ուսումնասիրություններին և հատկապես իտալերեն փաստաթղթերի վերծանությանն օժանդակելու համար։

² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման)։

Ասիայից մինչև միջերկրածովյան ավազանի նավահանգիստները¹: Այս հսկայական տարածաշրջանում մենաշնորհային առևտրական դիրքի հասած հայ վաճառականների «կախարդական հաջողությունը»² պայմանավորված էր այնպիսի մեխանիզմների գործադրմամբ, որոնք ապահովում էին ցանցի կայուն գործունեությունն ու միասնականությունը: Հիմնվելով Կոդ Մարկովիցի առաջ քաշած «շրջանառության տեսության»³ վրա՝ Մեպուհ Ասլանյանը ջուղայեցի վաճառականների առևտրական ցանցի հաջողությունը բացատրել է դրա ներսում վեց երևույթի կայուն շրջանառությամբ՝ վաճառականներ, ապրանքներ, կապիտալ, կանայք, քահանաներ ու տեղեկատվություն⁴: «Մարդկանց ու առարկաների» այս շարքից վաղ արդի դարաշրջանի վաճառականների կյանքում իր ուրույն դերակատարությամբ առանձնանում է տեղեկատվական հոսքերի փոխանակության ու ստացման համակարգը, որն իր վճռական ազդեցությունն էր թողնում ցանկացած առևտրական գործարքի հետագա ճակատագրի վրա: Վաճառականի կյանքի անբաժան մասն էր առևտրական շուկաների վերաբերյալ թարմ տեղեկատվություն ստանալու մտահոգությունը, որը այդ դարաշրջանում կարող էր բավարարվել մի քանի եղանակով:

Վաճառականների միջև տեղեկատվության փոխանակության գլխավոր միջոցը նամակն էր, որը, չնայած ենթակառուցվածքների զարգացման դանդաղ տեմպին, նույնիսկ XVII-XVIII դդ. շարունակում էր պահպանել իր այն բացառիկ նշանակությունը, որը ձեռք էր բերել դեռևս միջնադարյան շրջանում⁵: Դրա հետ մեկտեղ՝ վաղ արդի դարաշրջանն ուղեկցվեց առևտրական գիտելիքի փոխանցման նոր ուղիների առաջացմամբ կամ տարածմամբ՝ վաճառականական ձեռնարկներ, առևտրատնտեսական բովանդակությամբ պարբերաթերթեր, առևտրական թերթոններ և այլն⁶, որոնք կոչված էին

¹ Նոր Զուղայից սերող հայ վաճառականության պատմության շուրջ տե՛ս հատկապես **Խաչիկյան Շ.**, Նոր Զուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դդ., Երևան, 1988 և **Herzig E.**, The Armenian Merchants of New Julfa, Isfahan: A Study in Pre-Modern Asian Trade, St. Antony's College, Oxford University, 1991, Unpublished PhD thesis: Հարցի ուսումնասիրությունը թևակոխեց որակապես նոր փուլ Մեպուհ Ասլանյանի՝ հայկական առևտրական փաստաթղթերի մանրամասն հետազոտության վրա հիմնված գրքի հրատարակմամբ. տե՛ս **Aslanian S.**, From the Indian Ocean to the Mediterranean: The Global Trade Networks of Armenian Merchants from New Julfa, Berkeley, 2011:

² Տե՛ս **Braudel F.**, Civilization and Capitalism, 15th-18th Century, vol. 2: The Wheels of Commerce, New York, 1983, p. 158:

³ Տե՛ս **Markovits C.**, The Global World of Indian Merchants, 1750-1947: Traders of Sind from Bukhara to Panama, New York, 2000, p. 25:

⁴ Տե՛ս **Aslanian S.**, նշվ. աշխ., էջ 13-15:

⁵ Տե՛ս **Trivellato F.**, Merchants' Letters across Geographical and Social Boundaries // Edited by F. Bethencourt and F. Egmond, Cultural Exchange in Early Modern Europe, vol. III, Correspondence and Cultural Exchange in Europe, New York, 2007, p. 82-89:

⁶ Վաղ արդի Եվրոպայում առևտրատնտեսական բովանդակությամբ տարատեսակ թերթոնների մասին տե՛ս **McCuster J.** and **Gravesteijn C.**, The Beginnings of Commercial and

հաղթահարելու տարածությունը, այլ կերպ ասած՝ «համար մեկ թշնամուն»¹ վաղ արդի դարաշրջանում: Ջուղայեցի վաճառականների միջև առևտրական գիտելիքի փոխանակության անհրաժեշտությունը, համընդհանուր տարածում ստացած նամակներից բացի, բավարարվում էր նաև վաճառականական ձեռնարկների շրջանառությամբ, որոնք, մինչ օրս ուսումնասիրված չլինելով, կարող են համարվել հայ վաճառականության պատմության բաց ոլորտ:

Նոր Ջուղայի համաշխարհային առևտրական ցանցում շրջանառված վաճառականական ձեռնարկներից առաջին հերթին հիշատակության են արժանի «Աշխարհաժողով» ու «Դոներն ռադամին» երկերը, որոնք շարադրել է Կոստանդ Ջուղայեցին 1687 թ.: Դրանք՝ իբրև դասագրքեր, ոչ միայն գործածվել են Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի առևտրական դպրոցում², այլև իբրև առևտրական ուղեցույցներ օգտագործվել են վաճառականների կողմից իրենց գործնական ուղևորությունների ընթացքում³: Հավանաբար XVII դ. վերջին Նոր Ջուղայում տպագրական խիստ սահմանափակ հնարավորություններով պայմանավորված⁴ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկները մնացել են անտիպ և շրջանառվել միայն ձեռագիր վիճակում⁵: Հայերեն

Financial Journalism: The Commodity Price Currents, Exchange Rate Currents, and Money Currents of Early Modern Europe, Amsterdam, 1991:

¹ Տե՛ս **Braudel F.**, The Mediterranean and the Mediterranean World in the Age of Philip II, vol. 1, London, 1973, p. 355: Ֆրանսերեն բնագրի՝ “L’espace: ennemi numéro 1” արտահայտությունը գրքի անգլերեն թարգմանությունում դարձել է “Distance: The First Enemy”, որը, Ջեֆրի Պարկերի տեղեկացմամբ, չի արժանացել Ֆեռնան Բրոդելի հավանությանը (**Parker G.**, Incest, Blind Faith, and Conquest: The Spanish Hapsburgs and Their Enemies // Great Strategic Rivalries: From the Classical World to the Cold War, edited by J. Lacey, New York, 2016, p. 581, n. 13):

² Տե՛ս **Բաղդասյան Ս.**, Կրթություն և հաջողություն. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցը (XVII դ.-XVIII դ. սկիզբ) // Մատենադարանի 3-րդ միջազգային երիտասարդական գիտաժողովի հոգվածների ժողովածու, Երևան, 2018, էջ 51-64:

³ Այս փաստի վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Սեպուհ Ասլանյանը. տե՛ս **Aslanian S.**, նշվ. աշխ., էջ 137:

⁴ XVII դ. վերջերին Նոր Ջուղայում տպագրական գործի վերսկսման դժվարություններն արտացոլվել են հոգևոր առաջնորդ Ստեփանոս Ջուղայեցու նամակներում: Այս մասին առավել մանրամասն տե՛ս **Aslanian S.**, The Early Arrival of Print in Safavid Iran: New Light on the First Armenian Printing Press in New Julfa, Isfahan (1636-1650, 1686-1693) // «ՀԱ», 2014, թիվ 1-12, էջ 422-448, 453-468, **Կարապետյան Ս., Թաջիդյան Է.**, Էջեր XVII դարի վերջի Նոր Ջուղայի պատմությունից // «Բանբեր Երևանի համալսարանի», 1998, թիվ 2, էջ 81, **Թաջիդյան Է.**, Նոր Ջուղայի հայ գաղթօջախը 17-18-րդ դդ. եվրոպական աղբյուրներում, մաս I, Երևան, 2012, էջ 68-69:

⁵ Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներից մեկի՝ «Աշխարհաժողով»-ի միակ հրատարակված փոքրածավալ հատվածը տե՛ս **Փափագյան Վ.**, Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողովի» Հալեպ-Թավրիզ մայրուղուն վերաբերող հատվածը // «ԼՀԳ», 1985, թիվ 6, էջ 80-85, *նույնի*՝ Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI-XVII դարերում, Երևան, 1990, 160-163: Այս առիթով տեղին է նշել, որ ավարտական փուլում են իմ կողմից իրականացվող՝ Կոստանդ Ջուղայեցու առևտրական ձեռնարկների գիտական բնագրերի պատրաստման աշխատանքները, որոնց զուգահեռ ընթանում է նաև բնագրերի ծավալը գե-

ձեռագրացուցակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մեզ են հասել ջուղայեցի այս հեղինակի ձեռնարկներն ընդգրկող վեց ձեռագրեր, որոնցից երեքը պահվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, երկուսը՝ Օքսֆորդի Բոդլեյան գրադարանում, ևս մեկը՝ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի ձեռագրական հավաքածուում:

Տողերիս հեղինակը նպատակ ունի նոր լույս սփռելու XVII դարի գործիչ և մանկավարժ Կոստանդ Զուղայեցու կենսագրության վրա՝ բացահայտելով նրա գործունեությունը վաճառականության ոլորտում նախքան առևտրական դպրապետ և առևտրական ձեռնարկների հեղինակ դառնալը: Հոդվածը հիմնված է Երևանում, Նոր Զուղայում, Երուսաղեմում ու Օքսֆորդում պահվող հայերեն ձեռագրերի, ինչպես նաև՝ Վենետիկի ու Նոր Զուղայի դիվաններում պահպանված առևտրական վավերագրերի վրա, որոնց մի զգալի մասն ուսումնասիրվում է առաջին անգամ:

Կոստանդ Զուղայեցին հայերեն ձեռագրերի հիշատակարաններում

Կոստանդ Զուղայեցու մասին ցայսօր հայտնի տեղեկությունների շրջանակը սահմանափակված է եղել հայերեն ձեռագրերում նրա մասին պահպանված հատուկ նշանակություններով: Ձեռագրերի հիշատակարաններում նրա անունը ի հայտ է գալիս Ս. Ամենափրկիչ վանքի միաբանների, քահանաների ու սպասարկու անձնակազմի անվանացանկում և իր հեղինակած երկերում: Բացի դրանից, նա վկայված է նաև որպես ձեռագրի պատվիրատու և ստացող: Հիշատակարանային այս նյութը թույլ է տալիս հետևել Կոստանդ Զուղայեցու գործունեությանը 1685-1699 թթ. ժամանակահատվածում:

Կոստանդ Զուղայեցու անունը պահպանված հիշատակարաններից առաջինը գրել է նրա որդին՝ Ալեքսանդր Զուղայեցին, որը տարիներ անց՝ 1706-1714 թթ., պետք է զբաղեցներ Ամենայն Հայոց կաթողիկոսի աթոռը: Խնդրո առարկա հիշատակարանը, որում գրիչ Հակոբ քահանան խնդրում է հիշել ձեռագիրը ստացող Ալեքսանդր վարդապետին և նրա ծնողներին, պահպանվել է Ս. Ամենափրկիչ վանքի թիվ 12 ձեռագրում. «Զստացող սորա Աղեքսանդր վարդապետն յիշեցեք ի Քրիստոս եւ զհոգեւոր հայրն իւր եւ զբազմերջանիկ վարդապետն զՏէր Դաւիթ արքեպիսկոպոսն եւ զմարմնաւոր ծնողսն *զԿոստանդ միայնակեացն, որ է վարդապետ եւ ուսուցիչ ԲՃ և Ծ (250) մանկանց, այսինքն դպրապետ* եւ զմայրն իւր զԶեդեբեայ, որ մանկական տիօք փոխեցաւ ի Քրիստոս: Ի թվին ՌՃԼԴ (1685) գրվեցաւ»¹ (ընդգծումն մերն

րազանցող հանգամանալից ծանոթագրություններ կազմելու ու առևտրական գանազան հասկացությունները բացատրելու դժվարին ու տևական ջանքեր պահանջող գործը:

¹ Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 12, թ. 221բ : Ձեռագրի ընդօրինակությունն ավարտվել է հաջորդ տարի՝ 1686 թվականին, ինչպես երևում է վերջին հիշատակա-

է – Ս. Բ.): Կոստանդ Ջուղայեցու կնոջ՝ «մանկական տիօք» մահացած Ջեֆեղիայի տապանաքարը (1654 թ.) պահպանվել է Նոր Ջուղայի գերեզմանատնում¹: Կնոջ վաղաժամ մահվամբ է պայմանավորված նրա՝ սկզբնաղբյուրներում քանիցս հանդիպող «միայնակյաց» բնութագրումը:

Հատկանշական է, որ Կոստանդ Ջուղայեցու՝ «ԲՃ և Ծ (250) մանկանց» ուսուցիչ լինելու փաստը հաստատում և լրացնում են նրա իսկ երկերն ամփոփող ձեռագրերը: Այսպես, «Հարցմունք և պատասխանիք» երկի՝ Նոր Ջուղայում պահվող ընդօրինակության մեջ, որը կազմվել է 1687-1695 թթ., նա բնորոշվում է որպես «դպրապետ բժժ (250) մանկանց»²: 1685 թվականին վերաբերող հիշատակարանում նույն այդ երկի՝ Օքսֆորդի Բողլեյան գրադարանի գրչագիր օրինակը հեղինակին համարում է «դպրապետ և ուսուցիչ մանկանց երից հարիւրից»³: Ի դեպ, այս տեղեկության՝ ուշադրությունից դուրս մնալու պատճառով առավել տարածում է ստացել Կոստանդի՝ 250 աշակերտ ունենալու փաստը, ինչը հաճախ թյուրիմացաբար ներկայացվել է որպես Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցի շրջանավարտների ընդհանուր թվաքանակ⁴: Հասկանալի է, որ 1620-ական թթ. սկիզբ առած կրթական այս հաստատության գործունեության տարիներին նրա շրջանավարտների թվաքանակը եղել է անհամեմատ ավելի շատ, քան Կոստանդ Ջուղայեցու առևտրական դասընթացի ունկնդիրների քանակը հիշատակարանների գրության ժամանակ:

Ջուղայեցի դպրապետին հիշատակող ձեռագրական հաջորդ միավորը Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանքում 2973 թվահամարի ներքո պահվող Հայր Մաշտոց ծիսական ժողովածուն է, որը պարունակում է նրա ընտանիքի մասին ամբողջական տեղեկատվություն: Սա ընդօրինակություն է ավելի վաղ գրված ձեռագրից, ինչպես թույլ է տալիս ենթադրել ընդօրինակող գրիչ Սարգիս Գևորգյանի վկայությունը. «Եւ 1868 թուականի, ի բնագրէն օրինակեցի Պրուսացի աւագ սարկաւագ Սարգիս Գեորգեան»⁵: Վերջինս արտագրել է նաև նախահիմք հանդիսացած ձեռագրի գրիչ Հովհաննես քահանայի հի-

րանից՝ նույն տեղում, թ. 512ա: Ձեռագրի մասին տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի, Կ. Ա., կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 750-752:

¹ Այս է տապան աստուածապաշտ հեգ եւ խոնարհ Ջեֆեղային, մայր Տէր Աղեքսանդր կաթողիկոսին, ՌՃԳ (1654): Տե՛ս **Մինասեան Լ.**, Նոր Ջուղայի գերեզմանատունը, Նոր Ջուղա, 1985, էջ 29:

² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 252ա:

³ Օքսֆորդի Բողլեյան գրադարան, հայերէն ձեռագրեր, թիվ 14, թ. 10ա: Հարկ է նշել, որ ձեռագրի թերթերի համարակալումը խիստ անկանոն է, ինչը, ցավոք, ճշգրտել հնարավոր չէր թվային պատկերներով աշխատելիս:

⁴ Տե՛ս, օրինակ, «Հովհաննես Տէր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը», աշխատասիրությամբ Լ. Խաչիկյանի և Հ. Փափազյանի, Երևան, 1984, էջ 13, **Հովհաննիսյան Ս.**, Հայ առևտրական կապիտալն իբրև «աշխարհ-տնտեսություն» // «Վեմ», 2017, թիվ 1, էջ 59 և այլն:

⁵ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հատոր իններորդ, կազմեց Նորայր արքեպս. Պողարեան, Երուսաղեմ, 1979, էջ 163:

շատակարանը. «Ձստացող սուրբ գրոցս զմահտեսի վարպետ Կոստանն յիշեցէք ի Քրիստոս, եւ ծնողսն իւր զՌամազն եւ զԶիթանն, եւ զորդին իւր զԱղեքսանդր աստուածաբան վարդապետն, եւ զհանգուցեալ զդուստրն իւր զՄարմարն, եւ զայլ ամենայն արեան մերձաւորսն. եւ որ յիշէ յիշեալ լիցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ: Նաեւ զմեղապարտ Յովհաննէս քահանայի գրիչս»¹: Կարելի է ենթադրել, որ Կոստանդ Ջուղայեցու պատվիրած ձեռագրի այս հիշատակարանը գրվել է 1698 թվականից առաջ, քանի որ նրա որդին՝ նույն այդ տարում՝ Նոր Ջուղայի հոգևոր առաջնորդ դարձած Ալեքսանդրը, չէր հիշատակվի որպես սոսկ «աստուածաբան վարդապետ»:

Կոստանդ Ջուղայեցու անունը վկայված է նաև Արիստակես ու Աստվածատուր գրիչների՝ Նոր Ջուղայում համապատասխանաբար 1687 թ. և 1699 թ. ընդօրինակած ձեռագրերի հիշատակարաններում: Եթե Արիստակեսը բավարարվում է՝ խնդրելով հարգել «մահդասի Կոստանդեայ մանկավարժի եւ դպրապետի» հիշատակը², ապա Աստվածատուրը ամենայն բժախնդրությամբ թվարկում է Ս. Ամենափրկիչ վանքի շուրջը համախմբված մոտ 40 անձանց անուններ՝ միաբաններ, քահանաներ, սպասարկու անձնակազմ և այլն, որոնք բոլորը «հավաքեալ կան յայսմ համալսարանիս՝ ի վանս, որ կոչի Սուրբ Ամենափրկիչ Նորս Ջուղայու, ի Շօշ քաղաքիս»: Հոգևոր գործիչների մանրամասն թվարկումից հետո գրիչը չի մոռանում հիշատակել թե՛ տնտես Սարգսին ու «հասակաւն Բ (2) կանգուն» դռնապան Առաքելին և թե՛ դպրապետ Կոստանդին³:

Այսպիսով, հայերեն ձեռագրերի հիշատակարանները՝ որպես վաղ արդի հայոց պատմության աղբյուրագիտական կարևոր հենքեր, ուշադրության արժանի տեղեկություններ են հաղորդում Կոստանդ Ջուղայեցու մասին: Ժամանակագրական առումով նրան առնչվող առաջին վկայությունը վերաբերում է 1685 թվականին, իսկ վերջինը՝ 1699 թվականին: Դա այն ժամանակահատվածն էր, երբ Ս. Ամենափրկիչ վանքի դպրոցում անցկացրած առևտրական դասընթացները Կոստանդ Ջուղայեցու համար ապահովել էին դպրապետի համբավ: Հետագայում ընդօրինակված ձեռագրերը շրջանցում են նրան, քանի որ 1702 թ. նա մահացել էր, ինչը կարելի է կոսահել Նոր Ջուղայի գերեզմանատանը գտնվող նրա տապանաքարից⁴:

¹ Երուսաղեմի Ս. Հակոբյանց վանք, ձեռ. թիվ 2973, էջ 239:

² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 682, թ. 13ա: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, խմբագրութեամբ Օ. Եզանեանի, Վիեննա, 1972, էջ 152:

³ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 593, թ. 263բ-265բ: Տե՛ս նաև Յուզակ ձեռագրաց Նոր-Ջուղայի Ս. Ամենափրկչեան վանաց թանգարանի, հ. Բ, էջ 72-75:

⁴ Տապանս է միայնակաց դպրապետ Կոստանդին, որ փոխեցաւ առ ի Ք(քրիստո)ս թվ(ին) ՌՃԾԱ (1702): Տե՛ս Մինասեան Լ., նշվ. աշխ., էջ 40:

Կոստանդ Ջուղայեցին առևտրական փաստաթղթերում

Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանի ու Վենետիկի պետական արխիվի փաստաթղթային հավաքածուներում գտնվող մի քանի վավերագրեր հնարավորություն են ընձեռում լույս սփռելու Կոստանդ Ջուղայեցու կենսագրության վաղ շրջանի վրա: Նրա գործունեության այս փուլը ծածկված է եղել անորոշության շղարշով, ինչը որոշ ուսումնասիրողների մղել է անհարկի ենթադրությունների: Նոր Ջուղայի հայոց թեմի պատմությանն առնչվող իր արժեքավոր աշխատության մեջ Վազգեն Ղուկասյանը, օրինակ, Կոստանդ դպրապետի համար պատկերում է վանականի անցյալ՝ կարծիք հայտնելով, որ իր կնոջ վաղաժամ մահից՝ 1654 թվականից ի վեր, նա ընտրել է հոգևորականի ուղին¹: Փոխարենը՝ խնդրո առարկա փաստաթղթերը թույլ են տալիս բացահայտել Կոստանդ Ջուղայեցու վաճառականական անցյալը և ուրվագծել նրա առևտրական գործունեության թեկուզև աղոտ պատկերը:

Կոստանդ Ջուղայեցուն հիշատակող առևտրական փաստաթղթերից առաջինը Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող և արդեն իսկ քննարկված կոմենդա պայմանագիրն է, որը ստորագրվել է նրա և Պտոմի որդի Սիմեոնի միջև 1662 թ. հուլիսի 14-ին: Իր աղայի 1400 մառչիլի կողքին ներդնելով 160 մառչիլ՝ Կոստանդ Ջուղայեցին հավակնում էր ստացվելիք շահույթի մեծ մասին. «Ինչ Աստուած շախ տայ, էճ [700] մառչիլի շախն պարոն Սիմոնին, ըճկ [860] մառչիլի շախն ինձ՝ Կոստանդիլիս»²: Ըստ հայ վաճառականական միջավայրում գործող իրավանորմերի՝ կոմենդա գործակալները ստանում էին շահույթի մեկ չորրորդ, որոշ դեպքերում նաև՝ մեկ երրորդ մասը: Հակառակ միակողմանի կոմենդայի այդ տարատեսակին՝ այն գործակալը, որն ընդհանուր դրամագլխում որոշակի գումար՝ «էնալմալ» էր ներդնում, ստանում էր իրավական ավելի բարձր կարգավիճակ և հավակնում ընդհուպ շահույթի կեսին³: Երկկողմանի կոմենդա անունով հայտնի պայմանագրի հենց այս տեսակն էր ուժի մեջ մտել Կոստանդ Ջուղայեցու ու Պտոմի որդի Սիմեոնի միջև: Ապագա ջուղայեցի դպրապետի ներդրած գումարի չափը՝ 160 մառչիլ, հիշեցնում է իր օրագրական երկով հայտնի Զաքարիա Ագուլեցու՝ 150 մառչիլ եկամուտը, որը նա ստացել էր 1647 թ. իր առաջին առևտրական ճանապարհորդությունից որպես հայրական դրամա-

¹ Ghougassian V., The Emergence of the Armenian Diocese of New Julfa in the Seventeenth Century, Atlanta, 1998, p. 171.

² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Զանազան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալւածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

³ Հայ վաճառականների շրջանում կոմենդայի գործածության մասին մանրամասն տե՛ս Herzig E., նշվ. աշխ., էջ 213-226, Aslanian S., նշվ. աշխ., էջ 122-136, Խաչիկյան Շ., նշվ. աշխ., էջ 121-139:

գլխի մասնաբաժին¹: Զաքարիա Ագուլեցու համաժամանակյա օրինակը թույլ է տալիս ենթադրելու, որ Կոստանդ Ջուղայեցին ևս իր առաջին քայլերն էր անում առևտրական գործունեության ասպարեզում:

Այս կոմենդա պայմանագրից շուրջ չորս տարի անց՝ 1666 թ. ապրիլի 25-ին, Վենետիկում գտնվող Սիմեոնը գրում է կտակ, որը պահպանվել է այդ քաղաքի դիվանում՝ նրա գործունեությանն առնչվող գերազանցապես իտալերեն փաստաթղթերի մի կապոցում²: Այդ վավերագրերի՝ *Avogaria di Comun* ֆոնդում գետեղված լինելը հուշում է, որ ժամանակին դրանք մաս են կազմել ինչ-ինչ դատավարական նյութերի, ինչը, փաստորեն, ապահովել է դրանց պահպանությունը ցայսօր: Իր կտակում առևտրական գործընկերներից Դանիելի որդի Բարայելին Սիմեոնը ճանաչում էր որպես իր վաքիլ³, այն է՝ իրավահաջորդ և ներկայացուցիչ. «Դանիելի որդի Բարայելն ինձ վաքիլ լինի յետ մահուան իմոյ»: Կտակարարն Բարայելին հանձնարարում էր մեկտեղել իր ամբողջ ունեցվածքը՝ դրամական միջոցներն ու զանազան վայրերից ստացվող ապրանքները, այդ թվում՝ «ապրանք, որ Իզմիրոյ գոյ, որ Կոստանդն կողորկե»: Այն, որ Սիմեոնը նկատի ուներ հենց իր առևտրական գործակալ ու ապագա դպրապետ Կոստանդ Ջուղայեցուն, հաստատվում է կտակում նրա անվան երկրորդ հիշատակությունից. «Բթ [բարաթ՝] Ըռամազի որդի Կոստանդին հետ ունիմ, որ Իզմիրե իմ ընկեր է, բո [2000] մառչիլ իմ է, էճ [700] մառչիլ Կոստանդին՝ իւրն է. մեր դարարն այնպէս է՝ Տէր Աստուած ինչ շահ տայ, ոէճ [1700] մառչիլի շահն Կոստանդին լինի, ո [1000] մառչիլի շահն ինձ՝ Սիմեոնիս»: Սիմեոնի կտակի մեզ համար խիստ կարևոր այս մասը թույլ է տալիս պատկերացում կազմել ներդրված կապիտալի փոփոխության մասին կոմենդա պայմանագրի կնքմանը հաջորդած ժամանակահատվածում. չորս տարիների ընթացքում այն աճել էր շուրջ 73 տոկոսով՝ 1560 մառչիլից հասնելով 2700-ի: Ընդհանուր դրամագլխից բացի՝ Կոստանդ Ջուղայեցու ներդրած մասնաբաժնի աճը ևս ակնառու է. 160 մառչիլից հասնելով 700-ի՝ այն ապահովել էր 450 տոկոսանոց աճ: Սիմեոնի վերջին ցանկությունն արձանագրող այս փաստաթուղթը պահպանվել է նաև իտալերեն թարգմանությամբ՝ հաստատված նոտար Անջելո Մարիա Պիչչինոյի կողմից և թվագրված 1666 թ. մայիսի 5-ով⁴:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական գործունեությունն արտացոլող մեկ այլ փաստաթուղթ պահպանվել է Վենետիկի պետական արխիվի հայերեն փաստաթղթերի ֆոնդի առաջին թղթապանակում, որտեղ ի մի են

¹ Տե՛ս **Զաքարիա Ագուլեցի**, Օրագրութիւն, Երևան, 1938, էջ 159: Տե՛ս նաև՝ **Հովհաննիսյան Ա.**, Զաքարիա Ագուլեցին և իր ժամանակը, հրատարակության պատրաստեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2017, էջ 20-21:

² Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 3949.

³ Վաքիլի մասին տե՛ս **Herzig E.**, նշվ. աշխ., էջ 235-237.

⁴ Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 3949.

բերված ֆինանսական բովանդակությամբ վավերագրեր՝ ի տարբերություն նույն ֆոնդի՝ նամակագրական հավաքածուներ բովանդակող երկրորդ ու երրորդ թղթապանակների: Խնդրո առարկա փաստաթուղթը, որը բաղկացած է չորս մեծադիր թերթերից, կազմել է Իսրայելը Սիմեոնի մահից հետո¹: Ընդ որում, գրառումներից մեկը՝ «6 ջունիոյ 1666 այ Վենեցի ... յետ մահուան ողորմած հոգի Սիմոնին», ցույց է տալիս, որ նա մահացել էր նախքան 1666 թ. հունիսի 6-ը: Փաստաթղթի թվակիր նշումները վերաբերում են միայն 1666 թվականին: Բացառություն է նախավերջին թերթի վրա արված իտալերեն մի կարճ գրառում, որը վկայում է 1671 թ. հուլիսի 29-ին փաստաթուղթը վենետիկյան իշխանություններին հանձնելու մասին²: Առևտրական այս հաշվեթոթում արձանագրված են Իսրայելի՝ որպես Սիմեոնի վաքիլի գործունեությունն ու վերջինիս թողած դրամական միջոցների ու ապրանքների հետագա շրջանառությունը: Սիմեոնի ունեցվածքի մեջ հիշատակվում է Կոստանդ Ջուդայեցու հետ նրա ունեցած համատեղ կապիտալը, որից նրա մասնաբաժինը՝ «թամասկով սարմայ»-ն, 2000 մառչիլ էր: Այս հիշատակությունից բացի՝ Կոստանդ Ջուդայեցին քանիցս հանդես է գալիս առևտրական այս հաշվեթոթում: Մի դեպքում Իզմիրում նա ստանում է 1060 մառչիլ արժողությամբ «դոմզ, բանաշմ, ֆատկին, օրդնարի բանամշ» տեսակների «չուխայ», որն ուղարկվել էր Վենետիկից «նավի Սան Ջուզեփին», մեկ այլ դեպքում՝ հանդես է գալիս որպես Իսրայելի կնքած փոխանցային մուրհակի կողմ («կամպի ամ դրկել Եզմիրն, որ Դեվաջին տայ պարօն Կոստանդն»): Հատկանշական է, որ Դևաջի մականվամբ հայտնի էր ջուդայեցի վաճառական Գրիգորը, որը, որպես առևտրական գործընկեր, հիշատակվում է նաև թե՛ Իսրայելին ուղղված Մինասի որդի Մաթոսի մի նամակում³ և թե՛ Ջաքարիա Ագուլեցու հայտնի երկում: Իր «Օրագրության» էջերում ագուլեցի վաճառականը զայրույթով պատմում է «Հնդստան թե Ֆոնգստան» մեծ հարստություն կուտակած Գրիգոր Դավաջիի սնանկացման ու մահվան և պարտատեր հայ վաճառականներին ձեռնունայն թողնելու մասին. «Դարցեալ, այս տարուս [1667 թվականին] Իզմիր բինադար ոմն ջուդեցի, անունն Գրիգոր, ավել անունն Դևաջի, որ մեռաւ, դժոխոց բաժին էլաւ, մնաց այս սատակածիս վերայ բազրկանի ապրանք գճո [300000] մառչիլ: Ոմն փող ին շախով տվել, ոմն ապրիշում կամ այլ ապրանք... Մեռաւ այս Գրիգորս, մնաց Քրիստոսի դադաստանին սեւ երես»⁴:

Նոր Ջուդայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվանում պահվող տասնյակ հա-

¹ Archivio di Stato di Venezia, Documenti Armeni, busta 1.

² Փաստաթղթի այդ գրառումն ունի հետևյալ տեքստը՝ *Adi 29 luglio 1671, Presentato per d. [Dominus] Milchun de Egas in ossio* ^{ne} [osservazione] di ordine Magto [Magistrato] ad in st. [stanza] d. Israel de Daniel.

³ Archivio di Stato di Venezia, Avogaria di Comun, busta 4033.

⁴ **Ջաքարիա Ագուլեցի**, նշվ. աշխ., էջ 72:

զարավոր վավերագրերի շարքում է մի պարտամուրհակ¹, որում կրկին հանդես է գալիս վաճառականական ձեռնարկների ապագա հեղինակ Կոստանդ Ջուղայեցին: Հակոբի որդի Հերամպետից նա պարտք է վերցնում 4000 թիմի կազմող գումար՝ ամսական 1,5 տոկոս տոկոսադրույքով, ընդ որում՝ 1500-ը՝ իր, իսկ 2500-ը՝ Մկրտչի որդի Սարգսի «կոնթե», այսինքն՝ հաշվից. «Ես՝ Ռամազի որդի Կոստանդս, պարտիմ Հակոբի որդի Հերամպետին, չոք հազար [4000] թիմի, որ կեսն կառի բո [2000] թիմի, յինք առի, որ ամսէն ճ-ին [100] մին կէս [1,5] շախ տամ ուր հասապօվն, որ էստուր բոեճ [2500] թիմին Մկրտիճի որդի Սարգիսին կոնթէ ամ յինք առել, որ թիվն ոճժգ [1116+551=1667] յունվարի ե-ումն [5] մին հազար խինկ հարիւր [1500] թիմին իմ՝ Կոստանդիս կոնթէ յինք առի, որ թիվն ոճժգ [1116+551=1667] փետրվարի ե-ումն [7] այ: Էս իմ Կոստանդիս ձեռացայգիրս այ: Գիրքս այ ինձ դաբուլ»²: Փաստորեն, պարտամուրհակը, որը հայ վաճառականական միջավայրում հայտնի էր սանադ կամ թամասուկ անունով³, կնքվել է 1667 թ. հունվար-փետրվար ամիսներին: Իսկ ինչ վերաբերում է թիմին, ապա պարտամուրհակում նշվող դրամական այս միավորի մասին շուրջ երկու տասնամյակ անց հենց ինքը՝ Կոստանդ Ջուղայեցին, իր վաճառականական դասագրքի՝ Իզմիրին վերաբերող հատվածում պետք է գրեր. «Թէ՛ Իզմիր, թէ՛ Խոռմացտան ամ(ենայն) տեղ, դերագ սվիլայ մառչիլն, բաբաթ-բաբաթ փող կայ, որ ա բաբաթ ասլանլու մառչիլ այ և ա էլ կայ, որ զլոթայ կասեն, որ գ զլոթէն բ ասլանլու այ և կայ, որ թլթ կասեն, որ գ թլթն ա ասլանլու այ և կայ, որ ռուպ կասեն, որ դ ռուպն ա ասլանլու այ, կայ, որ թնկո կասեն, որ գ-ըն ա ասլանլու այ, կայ, որ թիմի կասեն, որ ժ-ըն ա ասլանլու այ»⁴: Իզմիրում շրջանառվող դրամական միավորների մասին տեղեկատվությունը Ղուկաս Վանանդեցու առևտրական ձեռնարկում ունի հետևյալ պատկերը. «Ասլանլուն 110 ըստակ է, 3 թուլթ, 4 ռուբ, 6 թնկըր, 10 թիմին»⁵: Այս տվյալների համադրումը թույլ է տալիս փաստել, որ Օսմանյան կայսրության դրամական համակարգի կենտրոնական միավորը՝ արծաթե ակչեն կամ սալտակ-ստակը, որով ներկայացվում էին հարկատեսակների չափերը՝ նահանգային օրենսգրքերում⁶, հավասար էր թիմի 1/11 մասին: Հետևաբար՝ Հերամպետից Կոստանդ Ջուղայեցու վերցրած պարտքը հասնում էր 44000 ակչեի: Այս վավերագիրը եզրափակում է նրա անունը հիշատակող առևտրական փաստաթղթերի՝ մեզ հայտնի շարքը:

¹ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի դիվան, Ջանագան նիւթերով գրութիւններ, թղթապանակ 5, առևտրական գրութիւններ, կալածագրեր, վաճառագրեր վարդապետական կնիքներով, 1643-1699 (առանց համարակալման):

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Herzig E., նշվ. աշխ., էջ 240-243:

⁴ Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 35բ:

⁵ Ղուկաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թւոյ և դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 26:

⁶ Pamuk S., A Monetary History of the Ottoman Empire, Cambridge, 2000, p. 67-68.

Եզրակացություն

«Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության» աշխատության՝ Հնդկաստանին նվիրված գլխում Ռաֆիկ Աբրահամյանը կարևորում է հնդկահայերի առևտրական գործունեության մասին Կոստանդ Ջուղայեցու «Աշխարհաժողով»-ի տվյալները, որոնց սկզբնաղբյուր է համարում «Հնդկաստանում ապրող և այնտեղ այցելող հայրենակիցների օրագրերն ու հաշվեմատյանները»¹: Նոր Ջուղայի և Վենետիկի դիվաններում պահպանված առևտրական վավերագրերն արմատապես փոխում են Կոստանդ Ջուղայեցու վաճառականական ձեռնարկների շարադրման հանգամանքների վերաբերյալ մեր պատկերացումները: Վաճառականական անցյալը նրան զինել էր առևտրական գործի վերաբերյալ «առաջին ձեռքից» վերցրած տեղեկատվությամբ, ինչն իր վճռական ազդեցությունն է թողել երկերում բերված տվյալների հավաստիության ու ճշգրտության վրա: Օրինակ, վաճառականներին ուղղված խրատները, որոնք «Աշխարհաժողով»-ի կարևոր մասն են կազմում², այնքան դիպուկ ու հստակ են արտացոլում առևտրական առօրյան ու կենսակերպը, որ դրանք միայն վաճառականի կենսափորձ ունեցող հեղինակի գրչի արդյունք կարող էին լինել: Աշխարհի զանազան վայրերում գործածվող չափի, կշռի, դրամական միավորների, հարկատեսակների և այլնի վերաբերյալ փաստական տեղեկատվությունը ևս բնորոշվում է ճշգրտությամբ, իսկ այս տվյալների համեմատությունը հայկական առևտրական հաշվեմատյանների հետ ի հայտ չի բերում զգալի տարբերություններ: Օրինակ, 1683 թ. փետրվարին Իրանից 738 մետր մահուղ արտահանող Հովհաննես Ջուղայեցին, ըստ Սեֆյան Իրանի հարկատեսակների մասին Կոստանդ Ջուղայեցու ձեռնարկներում ամփոփված տեղեկատվության³, Բանդար Աբբաս նավահանգստում պետք է վճարեր 22 թուման 6017 դիան, մինչդեռ նրա հաշվեմատյանում արձանագրված է շուրջ 1,5 թումանով ավելի գումար՝ 24 թուման 240 դիան⁴: Լևոն Խաչիկյանի և Հակոբ Փափագյանի համոզմամբ՝ տվյալների այս անհամապատասխանությունը հարկ է բացատրել Սեֆյան հարկային պաշտոնյաների կողմից պաշտոնական սակագները կամայականորեն խախտելու հանգամանքով⁵: Այլ դեպքերում ի հայտ եկած անհամապատասխանություններն էլ կարող են առևտրական տեղեկատվության հա-

¹ Տե՛ս **Աբրահամյան Ա.**, Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Երևան, 1964, էջ 437: Թեև գրքի հեղինակը Աշոտ Աբրահամյանն է, սակայն Հնդկաստանի հայկական գաղթավայրին վերաբերող գլուխը գրել է Ռաֆիկ Աբրահամյանը (տե՛ս նույն տեղում, էջ 436, ծան. 1):

² Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք, ձեռ. թիվ 64, թ. 9ա-10բ, 27ա-28ա:

³ Նույն տեղում, թ. 23բ:

⁴ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 72:

⁵ Հովհաննես Տեր-Դավթյան Ջուղայեցու հաշվետումարը, էջ 38-39:

րափոփոխության հետևանք լինել, ինչի մասին ահագանգում էր ինքը՝ Կոստանդ Ջուղայեցին, բազմիցս գործածած իր հետևյալ արտահայտությամբ՝ «վախտի գորայ՝ գայ եվել, գայ պակաս»: Նշենք նաև, որ վաճառականական անցյալն ու կենսափորձը նրա համար տեղեկատվության ամենից առաջնային աղբյուրը լինելով հանդերձ, չէին բացառում հայկական առևտրական փաստաթղթերի՝ որպես սկզբնաղբյուրի օգտագործումը, հատկապես եթե նկատի ունենանք, որ Կոստանդ Ջուղայեցին հիշատակվում է միայն Իզմիրում ծավալած իր գործունեությամբ, ուստի Արևելյան Միջերկրածովյան ավազանի «առևտրի գաղտնիքներից»¹ բացի՝ դժվար թե նա հավակներ առևտրական այլ շուկաների փայլուն իմացության: Այս ամենով հանդերձ, հարկ է արձանագրել, որ հարցի ուսումնասիրությունն իր վերջնակետին չի հասել ջուղայեցի հեղինակի վաճառականական ձեռնարկների աղբյուրագիտական հենքը լիարժեք պատկերացնելու տեսանկյունից:

Վաճառականական փորձառությունն ամեննին հազվադեպ հանդիպող երևույթ չէր առևտրական երկերի հեղինակների պարագայում: Դա հատկապես ակնառու էր վաղ արդի Եվրոպայում, երբ մեծ պահանջարկ ունեցող վաճառականական ձեռնարկ-դասագրքերը շարադրվում էին երբեմնի վաճառականների կողմից: Բնչպես եվրոպացի հեղինակների մասին նկատել է Դանիել Ռաբուզզին, առևտրական ձեռնարկների շարադրանքը «դարձել էր տնային զբաղմունք տարեց վաճառականների ու իրավաբանների համար»²: Հետևաբար՝ վաճառականական անցյալը հիմք է տալիս Կոստանդ Ջուղայեցուն դիտարկելու ավելի լայն՝ վաղ արդի Եվրոպայում շարադրված համանման առևտրական երկերի հեղինակների համապատկերում:

Կոստանդ Ջուղայեցու վաճառականական կենսագրությունը թույլ է տալիս նրան դասելու նաև XVII դարի հայ վաճառական-հեղինակների շարքին: Դեռևս շատ տասնամյակներ առաջ «հայ վաճառականների գրականությունը» հմտորեն սահմանած ու բնութագրած Լեոն հանդես է եկել հետևյալ նկատառմամբ. «17-րդ դարում մենք միայն մի հատ վաճառական հեղինակ տեսանք – Ջաքարիա Ագուլեցին, որ, սակայն, բոլորովին հավակնություն չի ունեցել հեղինակ երևալու, այլ բարի կամք է ունեցել իր ընտանեկան-առևտրական հիշատակարանը գրելու իր և իր ժառանգների համար»³: Առնվազն 1660-ական թթ. առևտրական գործունեություն ծավալած Կոստանդ Ջուղայեցին, փաստորեն, 1680-ական թթ. շարադրված իր վաճառականական ձեռնարկներով համալրում է իրենց ձեռքը գրիչ վերցրած XVII դարի հայ վաճառականների խիստ նոսր շարքը:

¹ Բնորոշման համար տե՛ս **Markovits C.**, The Global World of Indian Merchants, 1750-1947, p. 25.

² **Rabuzzi D.**, Eighteenth-Century Commercial Mentalities as Reflected and Projected in Business Handbooks // “Eighteenth-Century Studies”, 1995, vol. 29, n° 2, p. 170.

³ **Լեո**, Հայոց պատմություն, երրորդ հատոր, գիրք երկրորդ // Երկերի ժողովածու, երրորդ հատոր, Երևան, 1973, էջ 523:

**Саркис Балдарян – *Некоторые наблюдения об авторе торговых пособий
Костанде Джугаеци***

Цель статьи – пролить свет на биографию Константа Джугаеци с предложением объяснения его карьеры в качестве автора торговых учебников. Традиционный взгляд на жизнь Константа был ограничен колофонами армянских рукописей, в которых он описывался как учитель торговой школы в период между 1685 и 1699 годами. Согласно документам, хранящимся в Монастыре Святого Всеспасителя Новой Джульфы и Венецианском государственном архиве, Константин участвует в коммерческих операциях в Смирне в 1660-х гг. Из коммерческой жизни Константа следует сделать вывод, что он писал свои торговые руководства в 1680-х гг. на основе информации и опыта «из первых рук».

Sargis Baldaryan – *Some Notes on Constant of Julfa, an Author of Trade Manuals*

The essay aims to shed light on the biography of Constant of Julfa, offering an explanation for his career as an author of trade manuals. The traditional view of Constant's life has been limited to the colophons of Armenian manuscripts, which depicted him as a schoolmaster between 1685 and 1699. Relying on the documents preserved in New Julfa's All Savior's Monastery and Venetian State Archives, the paper shows that Constant was involved in commercial operations in Smyrna in the 1660s. What should be concluded from Constant's commercial career is that he wrote his trade manuals on the basis of first-hand information and experience in the 1680s.

Ներկայացվել է 06.09.2019

Գրախոսվել է 14.10.2019

Ընդունվել է տպագրության 05.11.2019